

(կարբ. Ա, 818-20), եւ ասոր հետեւանօր մատաղը տակաւ ջնջուէր անոնց միջէն, մնալով մեր քով միայն. այնպէս որ Շնորհալուոյն օրով արդէն «այլք յազգաց քրիստոնէից ոչ ունին սովորութիւն աննել զայս» (Ընդհ. 156): Հայրապետս կը կարծէր՝ թէ անոնց առաջնորդները չեն դրեր այդ կարգը, որովհետեւ հարկ չեն տեսեր, ինչպէս Լուսաւորիչն էր տեսեր (անդ): Բնականապէս իրեն անձանօթ էր հինը, որով այսպէս կը խօսէր:

Յ. — Մատաղի օրեր: — Առանձին օրեր սահմանուած չէին սովորական պատարագաց համար: Բայց որպէս զի թէ հրաւիրողը եւ թէ հրաւիրեալը կարենային միասին հաւաքուիլ, կ'ընտրէին տոները, ուր անզբաղութիւն եւ ուրախութիւն կարող էին ներդաշնակօրէն միարանիլ: Ս. Սահակայ կանոնք թուելով մատաղի տեսակները, «զամենայն ընծայս ուխտից, զատկաց եւ ազապաց եւ զայրոց տօնից» (98), այս վերջնով կ'իմանան մեր ըսած օրերը: Շնորհալին նոյնպէս հաւաքարար կը յիշէ զասոնք. «տերուեակաւ տօնից մատաղքն եւ սրբոցն Աստուծոյ» (Ընդհ. 160): Տարօնացին կը հաստատէ՝ թէ մատաղի օրը կախուած էր պարզապէս նուիրողին կամքէն. եւ թէ կը թո-